



NMC

Ազգային Հիփոթեքային  
Ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ | ԿԻՍԱՄՅԱԿ

## «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

### Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները

**Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.**

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:
- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2015թ.-ին կաճի մոտ 13%-ով՝ կազմելով մոտ 30.8 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվելիք ավելի քան 1200 հիփոթեքային վարկ:
- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ



NMC

Ազգային Հիփոթեքային  
Ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ | ԿԻՍԱՄՅԱԿ

Կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:

- Միևնույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:

